ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3013 - Ա **20 ապրիլի 2009թ.**

ՋԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑՈՒ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ Հ. 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷԴՈՒԱՐԴ ՎԱՂԻՆԱԿԻ ԱՎԱԳՅԱՆԻ, ՍԱԹԵՆԻԿ ՎԱՂԻՆԱԿԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Էդուարդ Վաղինակի Ավագյանի (ծնված 25.01.1950թ.), Սաթենիկ Վաղինակի Ավագյանի (ծնված 11.02.1955թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Ջաքարիա Քանաքեռցու փողոցի 2-րդ փակուղու հ.2 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 323.66քմ, որից 200.83քմ մակերեսով հողամասն Էդուարդ Վաղինակի Ավագյանին, Սաթենիկ Վաղինակի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 122.83քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1882 թվականը, 06.09.2007թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 08.04.2009թ. հ.20/2-Ե-212 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 06.04.2009թ. հ.20-Ել-2805 եզրակացությունը, համաձայն որի Ջաքարիա Քանաքեռցու փողոցի 2-րդ փակուղու հ.2 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Ջաքարիա Քանաքեռցու փողոցի 2-րդ փակուղու հ.2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Էդուարդ Վաղինակի Ավագյանի, Սաթենիկ Վաղինակի Ավագյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 200.83քմ մակերեսով հողամասին կից 122.83քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 122.83քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Սարկավագի փողոցի 2-րդ փակուղու հ.2 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Զաքարիա Քանաքեռցու փողոցի 2-րդ փակուղու հ.2 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Էդուարդ Վաղինակի Ավագյանի, Սաթենիկ Վաղինակի Ավագյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Քանաքեռ-Զեյթուն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ